Ես չուզեցի կասկածանքի պատճառ տալ ընկերներիս, եւ առանց միւս բաներին նայելու, իջայ ցած: Տղերքը տակաւին քնած էին նոյն դրութեան մէջ, որպէս թողել էի: Ես չկամեցայ խանգարել նրանց հանգստութիւնը, դուրս եկայ մինարեթից մի փոքր թարմ օդ ծծելու համար:

ԺԳ. ՎՀՈՒԿԸ

Արեգակը բաւական բարձրացել էր հորիզոնից: Վաղորդեան ցօղը գոյնզգոյն գոհարների նման շողշողում էր նորաբոյս խոտերի, թփերի տերեւների վրայ: Օդի մէջ տիրում էր գարնանային առաւօտի մեղմ զովութիւնը, թէեւ դեռ գարուն չէր:

Իմ սիրտը զգաց անսահման բերկրութիւն: Ինչո՞ւ: — Ինքս էլ չգիտէի: Գուցէ նրա համար, որ այստեղ ազատ էի, ոչ ոք չէր նեղացնում ինձ, ոչ մօրից, ոչ վարժապետից երկիւղ չունէի:

Փոքր-ինչ հեռանալով աշտարակից ես սկսեցի դիմել դէպի աւերակները: Կիսակործան պարիսպների, խորտակած սիւների, մամռապատ կամարների բեկորները մեծ մասամբ կորած էին վայրենի բոյսերի մէջ, որ ճոխութեամբ աճել էին այնտեղ: Ոզնին, ահագին կրիաները, երկչոտ չախկալները համարձակ կերպով վազվզում էին փլատակների մէջ:

Իմ ականջին զարկեց բոի ձայնը: Աւերակների այդ թագուհին իմ մանկութեան հասակից գրգռել էր իմ սնահաւատութիւնը: Ես համոզուած էի, թէ նա էր այդ բոլոր կործանումների պատճառը: Կը ռացայ, գետնից մի քար վեր առի, նայում էի չորս կողմս, որ գտնեմ, որ սպանեմ նրան: Բուն չէր երեւում: Ես քարը նետեցի ուղիղ այն կողմը, որտեղից լսելի եղաւ նրա ձայնը: Բարձրացաւ մի ճիչ, որ նման էր ադամորդու հառաչանքի: Ես սոսկացի: Փլատակների մէջ կծկոել էր մի պառաւ կին, փաթաթուած հին, մուգ-կապտագոյն սփածանելիքի մէջ: Ինձ երեւաց, որպէս թէ, աւերակների մէջ բնակող ոգիներից մէկը լինէր նա, կամ այն կախարդը, որ հսկում էր այդ անմարդաբնակ անապատի վրայ:

Նրա երկար, կիսով չափ կռացած հասակը բոլորովին նման էր մի այլանդակ կմախքի, որի ցամաք կազմուածքի մէջ մնացել էին ոսկորները միայն: Միակ կենդանութեան նշոյլը, որ նկատւում էր թուխ դէմքի վրայ, էին զոյգ կրակոտ աչքերը, որոնք վառւում էին դիւական խորամանկութեամբ:

Նա խիստ մտերմապէս մօտեցաւ ինձ:

— Ո՞վ ես դու, — հարցրի ես.